Իննսուն երեք (1910), Մեր բողոքներն ու Դաշնակցութեան ուժը անոնց հանդէպ (1911): ** ԼՈՅՍ թերթը 6 տարի (1901-6) հրատարակած է Մ. Մինասեան: Հին Ռէժիմին, անոր մուտքն ի Թուրքիա արգիլուած չէր, կրթ. և երկրագործական բովանդակութեանը համար: ** ՓԻԼԻՊ. ԵՒ ՏԻԳՐ. 1904ին տպած են **Աւետիկ**, նաև **Պատկեր** Հայ Յեղափոխութեան: ** Տպ. ԱԴԻԼԱՆԴԵԱՆ 1905-9 լոյս ընծայած է Հայկական ճգնաժամն և վերածնութիւն, Պատմական յոյզեր, Կրթ. սկզբունքներ և խոհայներ: ** Ի. Ա. ԵՐԱՆ (YERAN PRESS) վերջին տարիներս լոյս ընծայած է Բառարան հայ. անգլ. և անգլ. հայ., Պատկ. գրուցատրութիւն հայ. անգլ., Գործն. առողջաբանութիւն, Սեռ. առողջաբանութիւն. Ժողովրդ. երգարան: ** ՏՊ. ԿԻԼԻԿԻԱ (Մուշեղ Ս.ի). — **Ամերիկահայ Տարեցոյցը**, **Բանախօսութիւններ** (1912):

425-427. **ՖՐԻԶՆՕ** քաղաքին մէջ լոյս ընծայուած են **Քաղաքացի** (16 Օգոստ. 1902, Հ. Էկինեան), **Ասպարէզ** (5 տարիէ հետէ, խմբ. Ս. Կ. Սեքլեմեան) թերթերը: Իսկ ԲՐՕՎԻՏԷՆՍի մէջ 1912ին հրատարակուած է **Պահակ** (Վեր. Հնչ. կուսակցութեան): Այս թերթը 1911 Յնվր.էն սկսեալ լոյս տեսած է նախ ՊՕՍԹԸՆ, Հրաչ-Երուանդի, Եր. Մխիթարեանի և Տքթ. Արշակ Տէր Մարկոսեանի յաջորդական խմբագրութեամբ: ☞ Ամերիկահայ տպարաններէն շատը մամուլ չէ ունեցած. հայ. գիրքեր ու թերթեր տպուած են օտար մամուլով:

●●●

## ԳԼՈՒԽ ԺԲ.

1865էն սկսեալ

# ԵԳԻՊՏՈՍ

մինչեւ 1912

428-436. **ԳԱՀԻՐԷ**. — Փարաւոններու աշխարհին մէջ Ա. անգամ հայ տպարան հիմնողի բախտը կը վիճակի ԱԲՐԱՀԱՄ ՄՈՒՐԱՏԵԱՆի (207Դ թուահամար), 1865ին: Տպարանական իր բախտաշրջիկ կեանքը տե՛ս 207Ա թուահամար՝ Թուրքիոյ բաժինին մէջ (Երուսաղէմ): ** ՍԱՐԳԻՍ ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ԱՐԱՐԱՏ տպարանէն [Պէյն-էլ-Սուրէն] լոյս ընծայուած են **Մարիս** (1897), **Տեղեկագիր** Ա. շրջանի ազգ. որբանոցի ի Կիպրոս (1898), Աղքատին պատիւը (1902), Եկեղ. կալուածները (1903), Ատանայի ջարդը (1909), Անխիղճ դատաւորներ, նաև «Մաժակ», «Փիւնիկ», «Նոր օր» և Վ. Թիւքիւքեանի «Աւել» թերթերը (*) Արաբերէն գրպանի բառգիրք մը ևն.: Դարբինեան 1910ին իր գործատունը փակած է: Առաջ ալ կ'աշխատէր հոն տեղի կռվրկն. տպարանը: ** ՄՆՏԻԿԵԱՆ ԵՂԲԱՐՑ «վիմատպարան»էն լոյս ընծայուած են **Հայն ու Թուրքը** և Արևել. խնդիրը (1898), Զուարճալի անեգդոտներ և ժողովրդ. վէպիկներ: ** «ԱՐՇԱԼՈՅՍ» թերթի տպարանը կոչուած է նաև ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, 1897ին հիմնուած դաշնակցական ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆի նախաձեռնութեամբ, որուն կինը գրաշարութիւն ըրած է ամուսնոյն գործատան մէջ, հանդիսանալով Գ. հայ գրաշարուհին հայկական ամբողջ տպարանական աշխարհին մէջ: Ե. Թորոսեանի հրատարակութիւններն են՝ բաց ի 12 տարիէ հետէ «Արշալոյս» լրագիրէն՝ **Սասուն եւ Զէյթուն** (Ս. Ֆէլէկեանի) 1900, **Կանոնագիր** Որբասիրաց Ընկ.եան Հայոց ի Գահիրէ, Ազգ. Սահմանադրութիւն Հայոց, **Վերջալոյսի ձայներ** (Խրիմեան) 1901, **Ցաւերգք Հայրենեաց** (Հայորդին) 1902, Լսարան Ընթերցասուն, Հարց պատասխաններ (1903), Յայտագիր Կանոնագիր, **Ծիծաղկարան** Նուպար Փաշա (1904), **Պատասխանագիր**՝ առ.թիւ «Իմ աքսորի կեանքը»ի, Տառապանքի աշխարհէն (1909): ** ՕՆՆԻԿ ՀԱԼԷՊԼԵԱՆ Ս. Բիւրատի տպարանին ճարպիկ գրաշարներէն, պօլսահայ Հռոմէական, որ անոր տառերուն մէկ մասը գնելով 1899ին տպարան մը կը հիմնէ նախ Աղեքսանդրիա՝ ԱՐԱՔՍ անունով որ տպարանական ընկ. մըն էր (Յ. Շնորհքեան, Մուրաֆօֆ, Տամատեան, Է. Փափազեան ևն.): Գահիրէ, Խալիլ-էլ-Մասրի նամակատան դէմ հաստատելուն՝ «Արաքս»

(*) Եգիպտահայք գիրերէ աւելի ուժ տուած են լրագրութեան: 1865 Մարտ 16ին հրատարակուող **Արմաւենի** անդրանիկ պարբերականէն յետոյ կ'արժէ յիշատակել The Sphynx անգլ. թերթը որ կը հրատարակուէր գրօսաշրջիկներու եղանակին միայն՝ Թէօսօն Պիրռ = (Աղեքսանդր Ս. Պէզիրճեան) անուն Հայու մը կողմէ: